ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ԱՊՕՐԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Ադրբեջանական հեռուստատեսութեամբ Սեպտեմբերի 3ին ուշ երեկոյեան տրուած հաղորդագրութիւնից տեղեկանում ենք, որ Ադրբեջանի ԳԽ ընդունել է մի որոշում, որով ապօրինի է յայտարարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակումը:

Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների ծանօթ նստաշրջանը այս որոշման մէջ որակում է որպէս Ադրբեջանի Հանրապետութեան պետականութեան եւ ամբողջականութեան դէմ ուղղուած թշնամական քայլ, որը չունի իրաւական ուժ:

Ադրբեջանի ԳԽ նախագահի որոշմամբ, հանրապետութեան ՊԱԿին, ՆԳ նախարարութեանը եւ դատախազութեանը յանձնարարուած է խափանել հռչակագրի իրականացման ցանկացած փորձ, իսկ հանրապետութեան գլխաւոր դատախազին՝ պատասխանատուութեան կանչել դրա հեղինակներին:

Հանրապետական կազմկոմիտէին յանձնարարուած է ԼՂԻՄում իրավիճակը կայունացնելու եւ երկխօսութիւնը խորացնելու ուղղութեամբ լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել, արագացնել բնակչութեան զինաթափումը:

Որոշման վերջում Ադրբեջանի ԳԽ նախագահութիւնը ողջախոհութեան, միասնականութեան եւ լրջութեան կոչ է անում ադրբեջանական ժողովրդին:

Ինչպէս հաղորդում է ադրբեջանական հեռուստատեսութիւնը, որոշումն ընդունուել է Սեպտեմբերի 3ին, Բաքւում: Այն ստորագրել է Ադրբեջանի ԳԽ նախագահ Է. Կաֆարովան: